10167

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 06 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0117-23

Ձեռնարկողը՝ **Քաղաքացի Եղիշե Տիգրանյան**
Արարատի մարզ, բնակավայր Մրգավետ,Կամոյի փ. 1

Գործունեությունը՝ ***«Դիլիջան» ԱՊ Հաղարծին տեղամաս 24 քառ. 9 անտառամասի տարածքում հանգստյա գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0117-23

«28» հոկտեմբեր 2023թ.

«Դիլիջան» ազգային պարկի Հաղարծին տեղամաս 24 քառ. 9 անտառամասի տարածքում հանգստյան գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Քաղաքացի Եղիշե Տիգրանյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Դիլիջան համայնք

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի տարածքում Հաղարծին տեղամաս 24 քառ. 9 անտառամասի տարածքում նախատեսում է կառուցել հանգստյան գոտի:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Դիլիջանի համայնքապետարանի կողմից 2022թ օգոստոսի 10-ին տրված N Ա1-95 նախագծման թույլտվությունների հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայականով / ծածկագիր՝ 11-029-0743-0004 /, վարձակալության հիմունքներով ամրագրված 1.1 հա մակերեսով հողամասում, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը հանգստի համար նախատեսված:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 7) կետի «ա» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը, որպես քաղաքաշինական գործունեություն հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Տավուշի մարզում՝ «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի Հաղարծին 24 տեղամասի քմ 9 տեղամասում՝ Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում, Հաղարծին վանական համալիրից 2կմ հեռավորությունների վրա: Հողամասի ընդհանուր մակերես կազմում է 11,000մ^2 :

Համաձայն նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ հայտ) նախատեսվող գործունեության տարածքում կատարվել է երկրաբանական հետազոտություն, որտեղ Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները՝ կարստը, սողանքը,

քարաթափությունը, փլուզումը բացակայում են, պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Գործունեության ենթակա տարածքի հողերը անտառային շականագույն հողեր են՝ հումուսային շերտով մինչև 40 սմ, տարածքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան, տարածքին հարակից ձորակներում՝ 70-100մ հեռավորության վրա կան հալոցքային ջրեր:

Հայտով ներկայացված տարածքը ծառապատ է, բուսականության տիպը անտառային է, աճում են շուրջ 40 տեսակի արժեքավոր ծառատեսակներ և 18 տեսակի թփեր: Հիմնական անտառ կազմող ծառատեսակներն են կաղնին, հաճարենին, բոխին, սաղարթավոր տերևաթափ ծառատեսակներից տարածված են նաև թխկու, կեչու, հացենու, ուռենու, լորենու, թեղու և այլ: Կառուցապատման ընթացքում ծառահատումներ չեն կատարվելու, պահպանվելու է անտառային տարածքը: Կառուցապատման լուծումները նախատեսվում են ծառերի միջև, պահպանելով ամբողջ անտառային տարածքը:

Գործունեության ենթակա տարածքը կից է ասֆալտապատ ճանապարհին և Մ4 ավտոմայրուղուն՝ մոտ 2կմ (ուղիղ գծով), Թեղուտ բնակավայրին՝ 1,9կմ, Հաղարծին վանական համալիրին՝ 2կմ: Հարակից տարածքները արդեն ենթարկվել են անտրոպոգեն ազդեցության և տարածքում կենդանական աշխարհի բնադրավայրեր, որջեր և միգրացիոն ուղիներ, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված, էնդեմիկ բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել: Տարածքի որոշակի հատվածում առկա են պատմամշակութային արժեք ունեցող խաչքարեր, տապանաքարեր: Գործունեության իրականացման ընթացքում խաչքարերը և տապանաքարերը չեն վնասվելու, կարգաբերվելու են ԱՊ-ի և համայնքի համապատասխան մասնագետների վերահսկողությամբ: Գործունեության ենթակա տարածքի այլ հատվածներում հնագիտական շերտերը բացակայում են:

Նախատեսվող գործունեության ենթակա հողատարածք տրանսպորտային միջոցների և մարդկանց մուտքը լինելու է «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Համաձայն նախնական գնահատման հայտի նշված տարածքում նախատեսվում է հանգստյան գոտու կառուցում՝ 17 տիպային միահարկ քոթեջներով: .

Կառուցապատման լուծումներն են.

- Ընդհանուր մակերես - 11,000մ² (1.1 հեկտար)
- Կառուցապատման մակերես - 2,750մ² - 25%
- Քոթեջներ - 912մ² - 12h - 48մ2 /24հանգստացող- 5h – 67,2մ2 /20հանգստացող
- Ռեստորան բլուրի վրա - 280մ²
- Ադմինիստրացիա, պահակ, դրամարկղ, խաղահրապարակ - 545մ²
- Պահեստ և տեխ. սենյակ - 63մ²
- Հանդերձարան և սանհանգույց - 192մ²
- Լողավազանին հարակից հանգստի գոտի - 620մ²
- Լողավազանին հարակից Բար - 38մ²
- Վերգետնյա լողավազան - 100մ²
- Կանաչապատվող տարածք - 7.150մ² - 65%
- Արահետներ և մայթեր - 407մ² - 3.7%

- Կայանատեղի - 693մ² - 6.3%

Շինությունների առավելագույն բարձրությունը կազմելու է 5մ:

Շահագործման փուլում մեքենաները կայանելու են հանգստյան գոտու տարածքում 40 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղիում:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքներում քանդման, ապամոնտաժման կամ տեղափոխման աշխատանքեր չեն նախատեսվում: Տարածքը կառուցապատված և ցանկապատված չէ, բացակայում են բոլոր տեսակի ենթակառուցվածքները՝ էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

Շինությունները բերվելու են արդեն իսկ պատրաստի վիճակում, տեղադրվելու են կանգնակների վրա, որոնք էլ իրենց հերթին տեղադրվելու են բետոնյա հիմքերի մեջ, հավաքվելու են մետաղյա և փայտյա համադրության կոնստրուկցիաներով: Նախատեսվում է մանկական խաղահրապարակ՝ պարսպապատ և կանաչապատ:

Տարածքում անցկացվելու է 80 գծմ ընդհանուր երկարությամբ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ: Հանգստյան գոտում քոթեջների և այլ շինությունների ջեռուցումը կատարվելու է հոսանքով և վառարաններով, որոնք աշխատելու են վառելիքային բրիկետներով: Էլեկտրամատակարարումը (շինարարության և շահագործման փուլ) կատարվելու է համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի:

Հայտում նշված է, որ շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման նպատակով տեղադրվելու է ռուսական արտադրության «ՅՈՒԲԱՍ 75» տեսակի 1կենսաբանական մաքրման կայան, որը ապահովելու է օրական ծավալով 15 մ³ / կենցաղային կեղտաջրերի եռաստիճան և քառաստիճան մաքրում՝ մինչև 98%: Մաքրված ջրերը ջրահեռացման ներքին ինքնահոս ցանցով՝ 80 գծմ երկարության ստորգետնյա խողովակներով հեռացվելու են դեպի տարածքին կից գոյություն ունեցող ջրահեռացման համակարգ: Արտաքին հրդեհամարման համար նախատեսվում է հրդեհաշիջման առանձին համակարգ, որի համար տեղադրվելու են ջրի 2 երկաթբետոնե տարողություններ (ջրամբարներ)՝ յուրաքանչյուրը՝ 70մ³ տարողության: Ջրային տարողությունները լինելու են շինարարության փուլում վերգետնյա՝ 4,0x6.0 չափերի 1 հատ, իսկ շահագործման ժամանակ՝ 2 հատ, տեղադրվելու են շինությունների տանիքային հատվածներում: Ջրավազանների ծավալները հաշվարկված է հաշվի առնելով արտաքին հրդեհամարման ջրապահանջը՝ 5լ/վրկ: Այդ նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Տեխնիկական ջուրն օգտագործվելու է հրդեհաշիջման և անհրաժեշտության դեպքում ոռոգման նպատակով:

Համաձայն ՀՀՇՆ IV11. 07. 01-2006 շինարարական նորմերի՝ հանգստյան գոտին ապահոված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով:

Նախատեսվող գործունեության շինարարության ընթացքում բնական ռեսուրսներից օգտագործվելու է ջուրը:

Շինարարության ընթացքում աշխատողների համար խմելու ջուրը կբերվի շշերով, ըստ պահանջի: Կումունալ-կենցաղային և տեխնիկական նպատակով ջուրը

կբերվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքով, այդ նպատակով տեղադրվելու է 5 տոննա ծավալով, վերգետնյա, պլաստամասսե բաք, որը իզոլացվելու է ցրտից և տաքությունից պաշտպանելու նպատակով: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի:

Համաձայն հայտի շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (10 մարդ) 148,896մ³/շին.ժամ, միջին օրական 0,282մ³: Շինարարության փուլում տեղադրվելու է 90*90 չափերի 2 շարժական բիոզուգարան: Բիոզուգարանները տեղադրվելու են վարձակալության հիմունքով և աշխատանքների ավարտից հետո հանվելու են: Վերջիններիս մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքները տևելու են 24 ամիս, ինչի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ամբարձիչ, էքսկավատոր, կռունկ, բեռնատար, ինքնաթափ մեքենաներ և այլն: Մեքենաներն աշխատելու են ըստ պահանջի և կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին:

Շինարարության ընթացքում օգտագործվելու են մետաղական և փայտյա կոնստրուկցիաներ: Բետոնն օգտագործվելու է շինությունների հիմքերի ամրացման համար: Այն բերվելու է մասնագիտացված կազմակերպություններից՝ պատրաստի վիճակում, համապատասխան բետոնախառնիչներով՝ ըստ պահանջի: Շինարարության փուլում գործունեության տարածքում արտադրական հրապարակ չի նախատեսվում: Նախատեսվող կառույցները լինելու են երկկողմանի պատուհաններով, պատրաստված թեթև շին նյութերից՝ տախտակ, մետաղական կոնստրուկցիաներ: Տեղադրվող կոնստրուկցիաները՝ ամբողջական (դռներով, պատուհաններով) բերվելու են պատրաստի վիճակում և անմիջապես տեղադրվելու են: Շինանյութերի կուտակում ևս չի նախատեսվում, քանի որ վերջիններս բերվելու են հաջորդաբար՝ ըստ պահանջի: Գործունեության իրականացման ժամանակ առաջացած ավելցուկային նյութերը տարածքում չեն կուտակվելու:

Նախատեսվող գործունեության ընթացքում ենթադրում է 589մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է քոթեջների հիմքերի փորման (85մ³), ջրամատակարարման (164մ³) և ջրահեռացման (278մ³), մաքրման կայանի (22մ³) և ցանկապատի կառուցման (40մ³) աշխատանքներից:

Հողային զանգվածից առանձնացվելու է 165մ³ բուսահող, որի կուտակումը և պահպանումը իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համաձայն և հետագայում օգտագործվելու է տարածքի հարթեցման և տերասաների ստացման նպատակով:

Հիմնական թափոնատեսակը կենցաղային աղբն է, ողջ շինարարական աշխատանքերի ընթացքում կառաջանա 1440կգ /տարի կամ 2880կգ, իսկ շահագործման փուլում 21,6 տոննա/տարի: Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պոլիէթիլենային պարկերի մեջ, որն ամենօր հեռացվելու է տարածքից:

Շահագործման փուլում առաջացող կենցաղային աղբը կուտակվելու է տարածքում տեղադրվող 4 հատ 1,1մ³ տարողության համապատասխան աղբի

տարրաներում: Այն պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից պայմանագրային հիմունքներով՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ցանկապատում: Տարածքը մաքրվելու է ավելորդ աղբից և վերականգնվելու է լանդշաֆտը: Տարածքում կատարվելու է 440մ² մակերեսով ներտարածքային արահետներ և մայթեր՝ սալիկապատման տեսքով: Նախատեսվում է գործունեության ենթակա տարածքում՝ 2 502,5մ² ազատ տարածքի վրա կատարել կանաչապատման (խոտածածկման և ծառապատման) աշխատանքներ՝ ցանքս: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկե խողովակներով (ցնցուղային): Ցանկապատը լինելու է մետաղական ցանցով և հավաքված ճաղաշարով՝ 360 մ ընդհանուր երկարությամբ: Ցանկապատը անցկացվելու է 1.1 խորությամբ տեղադրվող մետաղական ուղղանկյուն խողովակե կանգնակների միջոցով:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները շրջակա միջավայրի վրա հիմնականում կապված են լինելու՝ փորման, հողային, բետոնային աշխատանքների, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանոաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, տարածքի կենսաբազմազանության պահպանման, ՀՀ Կարմիր գրքերում հաշվառված բուսական և կենդանական տեսակների հայտնաբերման, դրանց պահպանմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են հայտի միջոցառումների կառավարման պլանում: Մասնավորապես.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների հնարավոր ազդեցությունը նվազեցնելու նպատակով՝ օգտագործվող տեխնիկան սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը,
- տրանսպորտային միջոցների շարժը կազմակերպել հերթականությամբ, որպեսզի չխոչընդոտի տրանսպորտի երթևեկությունը,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը և նյութերը հնարավորինս պահել ծածկված վիճակում՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,
- բուսահողի պահպանումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 02.11.2017 թվականի N 1404-Ն որոշման դրույթներին համապատասխան,
- գործունեության տարածքում պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ ընկերությունը տեղեկացնելու է «Դիլիջան»ԱՊ-ին՝ դրանց պահպանության նպատակով,

- բուսատեսակները տեղափոխելու և վերատնկելու համար առանձնացվելու է հատուկ պահպանման գոտի՝ ԱՊ-ի համաձայնությամբ,

- կանաչապատված տարածքի խոտածածկի պահպանման և բուսականության բարձր աճն ապահովելու համար իրականացվելու են մշտադիտարկումներ,

- բացառվելու են վնասատուների դեմ պայքարի նպատակով քիմիական թունանյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են Կառավարության 2005 թ-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշմամբ,

- բացառվելու են ծառահատումները, բնական ռելիեֆի արհեստական փոփոխությունը,

- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Ծրագրի իրականացման բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ներդնել 500 հազար դրամ:

Պարբառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Դիլիջանի համայնքապետարանում հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, Դիլիջանի մարզպետարանը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժինները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ըստ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են, կարճատև և կրում են ժամանակավոր բնույթ:

Հանգստի գործի կազմակերպումը խթանելու տարածաշրջանում էկոտուրիզմի և զբոսաշրջության զարգացմանը, նպաստելու է բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը:

Փորձաքննական պահանջներ

- Հանգստի գոտու կառուցման շինարարության մեկնարկը սկսել ՀՀ օրենքով սահմանված համապատասխան թույլտվությունների առկայության դեպքում:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին, հնարավորինս նվազագույնի հասցնելով տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն ծանրաբեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում բացառել հնարավոր շինաղբի կուտակումները:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել Հայտում ներկայացված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավորինս չխթանել տարածքի էկոհամակարգը, լանդշաֆտը և հարակից շրջակա միջավայրը՝ բացառելով ծառահատումները:

- Ապահովել հայտով ներկայացրած մաքրման կայանի տեղադրումը:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման, աշխատանքների իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղեկացնելով այդ մասին ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դիլիջան» ազգային պարկի Հաղարծին տեղամաս 24 քառ. 9 անտառամասի տարածքում հանգստյան գոտու կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջին կարգի մասնագետ՝ Ռուզան Մակինյան